

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ
ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

«Փաստաբանը փաստաբանական գործունեություն իրականացնելիս *ազատ է* կատարելու այն, ինչ արգելված չէ օրենքով (...)» («Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս): Մույն հոդվածի իմաստով փաստաբանի ազատությունը որոշումներ կայացնելու և դրանցից բխող գործողություններ կատարելու հնարավորությունն է, որն առավելապես արժևորվում է քրեական գործերով պաշտպանի համար պաշտպանյալի շահերի ամբողջական պաշտպանության տեսանկյունից: Քրեական պաշտպանության ընթացքում պաշտպանին վերապահված ազատությունն ամենևին էլ ինքնանպատակ չէ. այն վերջինիս մասնագիտական պարտականությունները կատարելու համար պարտադիր և անհրաժեշտ պայման է, որն իր հերթին հենասյուն է մրցակցային, հետևաբար և արդար դատաքննության համար:

Սակայն, քրեական դատավարության ընթացքում վարույթի մասնավոր մասնակիցների կողմից *բացարձակ ազատություն* դրսևորելը, այսինքն՝ իրենց վերապահված դատավարական իրավունքներն անխնա ու անվերջ իրացնելը, օգտագործելը կամ այդ իրավունքների իրացման միջոցով այլ անձանց շահերի տեսանկյունից ոչ ցանկալի, բացասական կամ ոչ ողջամիտ նպատակի հասնելը, կարող են հանգեցնել ծայրաստիճան ամենաթողության՝ փակ շղթայի, որում անվերջ կբախվեն հանրային և մասնավոր շահերը:

Քանի որ քրեական դատավարության հիմքում ընկած է այն անվիճելի ելակետը, համաձայն որի վարույթի որևէ մասնակից, անկախ իր կարգավիճակից (մեղադրյալ, տուժող, պաշտպան, դատախազ), իրավասու չէ «խաղեր խաղալու» արդարադատության հետ, ապա քրեական վարույթի ընթացքում պաշտպանի ազատությունը փաստաբանական էթիկայի պահանջներով և դատավարական օրենքներով սահմանափակելը լիովին տեղավորվում է արդար դատաքննությո-

¹ ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ ի.գ.թ., դոցենտ Շ. Հ. Ղուկասյան:

յան ընթացքում հանրային և մասնավոր շահերը հավասարակշռելու գաղափարախոսության տրամաբանության մեջ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս ազատ է այնքան ժամանակ, քանի դեռ չեն խախտվել այլ անձանց իրավունքներն ու ազատությունները, ուստի և վերոնշյալ տեսանկյունից շատ ավելի է արժևորվում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) 29-րդ հոդվածի 2-րդ մասի (ոչ իրավաչափ վարքագծի արգելքը) առկայությունը, համաձայն որի՝ արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին:

Այս նորմի առկայությունն ինքնին հստակ արտահայտում է հանրային և մասնավոր շահերի հարաբերակցության խնդիրը՝ հավաստելով, որ քրեական դատավարության համար թերևս մասնավոր շահերը կարևոր արժեք են, սակայն բացարձակ չեն:

Ուշագրավ է, որ հոդվածում տեղ գտած «այլ անձանց կամ արդարադատության շահին վնաս հասցնել» արտահայտությունն առկա է ոչ այն պատճառով, որ այն նեղացնում է սկզբունքի կիրառման ոլորտը, այլ որպես ընդհանուր պայման, օրինաչափություն: Չենք կարծում, որ կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ վարույթի մասնավոր մասնակիցների, առավել ևս պաշտպանի կողմից, իրավունքների չարաշահումը չհանգեցնի արդարադատության շահի հետ որևէ հակասության, անգամ եթե գործի ելքը դրանից չի փոխվում: Այսպես, տուժողի փաստաբանն իր միտումնավոր գործողությունների արդյունքում ձգձգում է դատական նիստը, որպեսզի մեղադրյալի, որի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառված չէ, բանկային հաշիվները ավելի երկար ժամանակ լինեն արգելանքի տակ: Թերևս այս իրավիճակում փաստաբանի գործողությունները գուցե և գործի ելքի վրա որևէ ազդեցություն չունենան, դրանց հետևանքով մեղադրյալն ավելի շատ չզտնվի անազատության մեջ, այդուհանդերձ արդարադատության շահի հետ հակասությունն անխուսափելի է, քանի որ գոյություն ունի դատավարական ժամկետների ողջամտության պահանջ: Ընդ որում, ի տարբերություն գործող օրենսգրքի, այն իր հստակ արտացոլումն է ստացել Նախագծի 24-րդ հոդվածում, որի 1-ին մասը սահմանում է. «Նախաքնությունը և դատաքնությունը

պետք է ավարտվեն ողջամիտ ժամկետում»: Ասվածի մեկ այլ վառ օրինակ է պաշտպանության կողմի՝ գործի ոչ այնքան ծավալուն նյութերին տևական ժամանակով ծանոթանալը՝ ակնհայտ նպատակ ունենալով այս իրավունքի չարաշահմամբ ձգձգել վարույթը: Նկատենք, որ այս առումով ևս առաջատար և կանխարգելիչ քայլ է կատարվել Նախագծում, որի 202-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ վարույթի մասնակիցները պարտավոր են գործին ծանոթանալ ողջամիտ ժամկետում: Անհրաժեշտության դեպքում քննիչը կարող է վարույթի տվյալ մասնակցի համար սահմանել քրեական գործին ծանոթանալու որոշակի ժամկետ: Սույն բովանդակությամբ հոդվածի ամրագրումը կանխում է պաշտպանի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի չարաշահման հնարավորությունը:

Թերևս վերոնշյալ հոդվածների առկայությունը Նախագծում միտված է կանխելու պաշտպանի կողմից իր գործունեության ընթացքում իրավունքների չարաշահման դեպքերը, սակայն դրանք խնդրին միայն դրվագային լուծում են տալիս և ի գորու չեն կանխել կամ բացառել բոլոր հնարավոր դեպքերը, որոնք կարող են ի հայտ գալ պրակտիկայում:

Այդ իսկ պատճառով, համոզված ենք, որ հայրենական քրեական դատավարությունում արդյունավետ նորամուծություն է Նախագծի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, որը նախատեսում է, որ իրավունքների չարաշահում թույլ տված անձի նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել նրա վարքագծին համաչափ դատավարական սանկցիա, եթե, իհարկե, այն չկիրառելը կարող է վտանգել վարույթի բնականոն ընթացքը:

Սա երկարատև պրակտիկայի արդյունքում քրեական դատավարության առջև ծառայած համակարգային խնդիրների համապարփակ լուծման եղանակներից մեկն է, որից կախված է ողջ վարույթի արդյունավետությունն ու հավասարակշռվածությունը: Այսպես, մի շարք դեպքերում, երբ վարույթի մասնավոր մասնակիցների կողմից դրսևորվում են իրավունքի չարաշահման կամ պարտականությունների ակնհայտ չկատարման դեպքեր, գործող կառուցակարգը վարույթն իրականացնող մարմնին դրանց ողջամտորեն արձագանքելու հնարավորություն չի ընձեռում: Սրա պատճառն այն է, որ գործող քրեական դատավարության օրենսգրքում առկա լուծումները (խոսքը վերաբերում է հենց դատական սանկցիաներին) հատվածական են,

ըստ էության և ամբողջությամբ չեն ներառում քրեական դատավարության բոլոր փուլերը: Իսկ պաշտպանների կողմից իրենց իրավունքների չարաշահում և պարտականությունների կատարումը բացառված չէ նաև մինչդասական վարույթում: Այսպես, քիչ չեն այն դեպքերը, երբ վարույթի ընթացքում պաշտպանը չի ներկայանում այն վարույթային գործողությունների կատարմանը, որոնց նրա ներկա գտնվելը պարտադիր է: Ուստի, ոչ իրավաչափ վարքագծի արգելքը սկզբունքի և դրա հակակշիռների նախատեսումը Նախագծում առաջնահերթ միտված է հիմնարար լուծում տալ հենց այս խնդիրներին՝ ի տարբերություն գործող օրենսդրության՝ ապահովելով փուլային ամբողջականությունը, քանի որ, ըստ Նախագծի, իրավունքների չարաշահման կանխարգելումը կարող է տեղի ունենալ ոչ միայն դատարանի կողմից (ինչպես գործող տարբերակում է), այլև վարույթն իրականացնող մարմնի, այսինքն՝ ընդգրկում է նաև մինչդասական վարույթը, և համապատասխան իրավունքներ կարող են ձեռք բերել նաև քննիչը կամ դատախազը, երբ հանդես են գալիս որպես վարույթն իրականացնող մարմին:

Ընդ որում՝ դատավարական հարկադրանքի միջոցներ բաժնում առանձին գլուխ է նախատեսված, որը կոչվում է «դատավարական սանկցիաներ» (գործուղում՝ «դատական սանկցիաներ»): Ինքնին դատավարական սանկցիաներ կիրառելու հիմքն այն է, երբ վարույթի մասնավոր մասնակիցը իրավունքները չարաշահելու կամ պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու միջոցով խոչընդոտ է ստեղծում վարույթի բնականոն ընթացքի համար:

Ստացվում է, որ Նախագծում ոչ միայն ամրագրված են իրավունքների չարաշահումը որպես թույլատրելի վարքագծի արգելք, այլև չարաշահման դեպքում համապատասխան սանկցիաների կիրառման հնարավորությունը:

Իրավունքի չարաշահում երևույթի և դրա համար վրա հասնող սանկցիաների կիրառման հնարավորության հետ կապված ուշագրավ դիրքորոշում է արտահայտել ռուս գիտնական Վ. Ա. Բելովը, ըստ նրա իրավունքի չարաշահում կատեգորիան անտրամաբանական է ու հակասական, քանի որ այս դեպքում խոսքը գնում է պատասխանատվության մասին, որը վրա է հասնում իրականացրած իրավունքի համար: Չէ՞ որ հակառակ դեպքում հարց է առաջանում՝ էլ

ինչի համար է նախատեսված նման սուբյեկտիվ իրավունքը, և արդյոք դա առհասարակ սուբյեկտիվ իրավունք է²:

Վերոնշյալ տեսակետի հետ կարելի է համաձայնել միայն մասամբ: Բնական է, որ պետք է խուսափել այնպիսի իրավակարգավորում նախատեսելուց, որը մի կողմից վարույթի մասնակցին, հատկապես պաշտպանին, կվերապահի իր պրոֆեսիոնալ գործունեության ընթացքում կիրառելիք համապատասխան իրավունքների ցանկ, իսկ մյուս կողմից հենց այդ նույն օրենքը կպարունակի այդ իրավունքների իրացմանը խոչընդոտող կառուցակարգեր:

Հասկանալու համար՝ ինչով ենք պայմանավորում իրավունքների չարաշահմանն ուղղված արգելքի նախատեսումը քրեական դատավարության մեջ, նախ պարզաբանենք ինչպիսի դրևորումներ կարող է ունենալ իրավունքի չարաշահումը քրեական գործով պաշտպանի համար, և ընդհանրապես ինչի կանխմանն է ուղղված այս դրույթի նախատեսումը:

Այսպես, դատական պրակտիկային ամենևին էլ խորթ չեն այնպիսի դեպքերը, երբ մի քանի տարի շարունակ չի հաջողվում ավարտին հասցնել քրեական գործերը «խելացի» պաշտպանների «գերմտածված» գործողությունների արդյունքում, երբ նրանք իբրև թե «տակտիկական» նկատառումներով փաստաբանական էթիկային և քրեական դատավարության ոգուն հակասող գործողություններ են կատարում, ընդ որում՝ երբեմն ոչ այնքան իրենց վստահորդի, որքան իրենց իսկ շահի համար: Բնականաբար, այս տեսանկյունից բոլորովին արդարացված չէ պաշտպանի այնպիսի վարքագիծը, որով նա փորձում է խոչընդոտել վարույթն իրականացնող մարմինների աշխատանքին, անհարգալից պատճառներով չի ներկայանում դատավարական գործողությունների կատարմանը կամ ամեն կերպ փորձում է ժամանակ ձգել, անիմաստ ու անտեղի միջնորդություններ է հարուցում, թերագնահատում է վարույթն իրականացնող մարմինների գիտելիքները, փորձը կամ հակառակը՝ նրանց հետ մտնում է գործարքի մեջ, գործն իրականացնում է քննիչի թելադրանքով, գործի նյութերին ծանոթանալու համար պահանջում է ավելի երկար ժամանակ, քան անհրաժեշտ է և այլն: Այս ձևերով պաշտպանները փորձում

²<http://ugolovniy-process.jus.ee/articles/Kak-iskluchit-zloyopotreblenie-pravom-storonoizashiti-11.htm>, <http://justicemaker.ru/view-article.php?id=22&art=206>

են ձգել վարույթը ինչքան հնարավոր է շատ՝ ընդհուպ մինչև վաղեմության ժամկետների լրանալը:

Ի հավելումն վերոշարադրյալի՝ մեջբերենք ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի՝ 2005 թ. դեկտեմբերից 2010 թ. հունվարն ընկած ժամանակահատվածի կարգապահական վարույթի վիճակագրությունը: Միայն այս ժամանակահատվածում 67 անգամ կարգապահական վարույթ է հարուցվել, որոնցից միայն 31-ով է վարույթը կարճվել: Իբրև սանկցիա 12 դեպքում ստացվել է նկատողություն, 7-ի դեպքում՝ խիստ նկատողություն, 2-ը ենթարկվել են դրամական տույժի: Փաստաբանների կողմից հատկապես լայնորեն կատարված խախտումներն են. գործը չկատարելը 22 դեպք, դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելը, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելը, նիստից ուշանալը՝ 10 դեպք, վստահորդի շահերին դեմ գործելը և հասանելիք գումարը չվերադարձնելը՝ 8 դեպք, պաշտպանությունն իրականացնել քննիչի նախաձեռնությամբ՝ 10 դեպք, դատական նիստը լքելը առանց դատավորի թույլտվության՝ 10 դեպք, դատական նիստերին չներկայանալը՝ 5 դեպք, հարցաքննության չգտնվելով արձանագրությունը ստորագրելը՝ 5 դեպք, խոստումներ տալ ազատագրկումից հանելու, գույքը կալանքից հանելու, գործը լիակատար շահելու և այլնի համար՝ 4 դեպք, նախաքննության կամ դատաքննության միտումնավոր ձգձգումը՝ 4 դեպք, գործարքի մեջ մտնել մյուս կողմի հետ՝ 4 դեպք:

Վերոնշյալ պատկերը ոչ միայն ցանկալի չէ արդարադատության շահի, այլև հասարակության մեջ՝ փաստաբանության նկատմամբ ձևավորվող բացասական վերաբերմունքի տեսանկյունից:

Անդրադառնալով Նախագծում տեղ գտած դատավարական սանկցիաներին, հարկ է նշել, որ հստակ նախատեսվել են դրանցից յուրաքանչյուրի իրավաչափության պայմանները, կիրառության հիմքերը, ինչպես նաև այն սահմանափակումները, որոնք առաջ են բերում համապատասխան սանկցիայի կիրառումը: Ընդ որում՝ դատավարական սանկցիայի կիրառության նպատակը պարտադիր պետք է լինի հենց վարույթի բնականոն ընթացքն ապահովելը: Օրենքը մի քանի դեպքերում երաշխիքային մակարդակով հստակ սահմանում է, որ կիրառվող դատավարական սանկցիան պետք է համաչափ լինի այն վարքագծի բնույթին և հետևանքներին, որը կանխարգելելու համար կիրառվում է: Եվ քանի որ Նախագծում իրավունքի չարաշահ-

ման յուրաքանչյուր դեպք իր արտացոլումն է գտել դատավարական իրավունքի նորմում, ուստի և ապահովվում է վարույթի մասնավոր մասնակիցների կողմից իրենց վերապահված իրավունքների իրացման հասանելիությունն ու մատչելիությունը՝ թույլ չտալով, որ պաշտպանի գործունեությունն ի վերջո վերածվի իրավաբանական հերյուրանքի:

Նախագծի 143-րդ հոդվածը, որը նվիրված է *իրավունքի իրականացման սահմանափակում դատավարական սանկցիային*, վարույթի մասնակցի կողմից որոշակի իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում նախատեսում է համապատասխան որոշմամբ դրանց իրականացման համար ժամանակային կամ քանակական պայմանների սահմանափակում: Ընդ որում՝ այս սանկցիան կարող է կիրառվել միայն սահմանափակ շրջանակով իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում: Դրանք են՝ միջնորդություն հարուցելը, բացարկ հայտնելը, վարույթի նյութերին կցելու և հետագոտելու համար ապացույց ներկայացնելը, վարույթի նյութերին ծանոթանալը և դրանցից ցանկացած տեղեկություն դուրս գրելը, բացման խոսքով, եզրափակիչ ելույթով կամ եզրափակիչ հայտարարությամբ հանդես գալը, պաշտպանից հրաժարվելը: Սանկցիան կիրառելու համար անհրաժեշտ է, որ այդ իրավունքները ոչ թե մեկ կամ երկու անգամ, այլ պարբերաբար չարաշահված լինեն: Կարևոր քայլ է նաև այն, որ սանկցիան կարող է կիրառվել բացառապես որոշմամբ, ինչն ապահովում է դրա բողոքարկման հնարավորությունը:

Հաջորդ կարևոր հայեցակետը նորմում տեղ գտած *«չարաշահում»* եզրույթն է, որը թեպետ ինքնին գնահատողական կատեգորիա է և նորմատիվ ակտերով նախատեսված չեն այն ձևական հատկանիշները, որոնցով այն բնութագրվում է, ինչպես նաև այն դեպքերը, որոնց առկայության դեպքում այս կամ այն գործողությունը կարելի կլինի գնահատել որպես *չարաշահում*³, սակայն հայերեն բացատրական բառարանում այն բացատրվում է որպես ի չար գործադրել, չառարկել, չարամտել, ինչն իր հերթին բացատրվում է որպես չար դիտավորություն, չար մտադրություն, որն ուղղված է որոշակի նպատակի: Այսինքն՝ քրեաիրավական տեսանկյունից միանշանակ կարող

³ Տե՛ս Աղայան Է., Արդի հայերեն բացատրական բառարան, Երևան 1976, էջեր1156, 1157:

ենք փաստել, որ չարաշահել եզրույթն իր մեջ ընդգրկում է ոչ միայն դիտավորություն, այլև որոշակի ուղղվածություն, հստակ նպատակ ինչ-որ արդյունքի հասնելու համար: Մտացվում է, որ իրավունքի չարաշահման դեպքում պաշտպանը դիտավորությամբ միտում ունի իր գործողություններով հասնել ինչ-որ նպատակի, ինչն իր վստահորդի կամ իր համար կարող է ունենալ որոշակի դրական հետևանքներ (կձգձգել քրեական վարույթը, պաշտպանյալին ցույց տալ, որ ինքը շատ գործ է անում, հավելյալ գումար աշխատել և այլն):

Նետևաբար, վարույթի ոչ մի մասնակից, հատկապես, փաստաբանական գործունեությամբ զբաղվող պաշտպանն իրավունքը չարաշահել, այն էլ պարբերաբար, *անզգուշության կամ չիմացության* հետևանքով ի գորու չէ: Իսկ դա ևս մեկ վկայություն է այն մասին, որ իրավունքի չարաշահման արգելք նախատեսելը միանգամայն արդարացված է:

Բացի այդ՝ նորմի առկայության օգտին խոսող մյուս փաստարկն այն է, որ Նախագծի տրամաբանությունից լիովին բխում է, որ եթե սանկցիա է կիրառվում այն բանի համար, որ անընդհատ չարաշահվում է բացարկ հայտնելու կամ միջնորդություն հարուցելու իրավունքը, բնականաբար, սա չի նշանակում, թե այս անձն ընդհանրապես զրկվում է քրեական վարույթի ընթացքում միջնորդություն հարուցելու իրավունքից: Խոսքը պարզապես վերաբերում է կոնկրետ իրավիճակում, կոնկրետ հիմքերով այդ իրավունքի չարաշահման կանխելուն ուղղված համապատասխան սանկցիա կիրառելուն:

Նախագծով նախատեսված դատավարական հաջորդ սանկցիան վարույթից հեռացնելն է (148-րդ հոդված): Նախ, այս սանկցիան կիրառվում է սահմանափակ թվով սուբյեկտների նկատմամբ, որոնց թվում է նաև փաստաբանը, բացի այդ հստակ նախանշված են նաև բոլոր այն դեպքերը, երբ կարող է կիրառվել սանկցիայի այս տեսակը. եթե սուբյեկտներից մեկը երկու անգամ կամ առանց հարգելի պատճառի չի ներկայանում դատական նիստին կամ իր համար պարտադիր վարույթային գործողության կատարմանը կամ եթե երեք անգամ դատավարական սանկցիայի ենթարկվելուց հետո շարունակում է պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափել:

Նախագծում լուծում է տրվել նաև մեզանում խիստ տարածում գտած հակառակ երևույթին՝ պաշտպանյալի կողմից իր պաշտպանին փոխարինելու կամ պաշտպանից հրաժարվելու չարաշահման

դեպքերին, ինչը ևս մեծապես խաթարում է վարույթի բնականոն ընթացքը: Այսպես, Նախագծի 47-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսվում է, որ նոր պաշտպանից հրաժարվելու՝ մեղադրյալի կամարտահայտությունը պարտադիր չէ վարույթն իրականացնող մարմնի համար, եթե մեղադրյալն *ակնհայտ չարաշահում է* պաշտպանից հրաժարվելու իր իրավունքը: Այդ դեպքում վարույթն իրականացնող մարմինը որոշմամբ չի ընդունում պաշտպանից հրաժարվելը: Մինչդեռ գործող քրեական դատավարության օրենսգրքում այս հարցի կապակցությամբ ոչ միայն նախատեսված չէ որևէ հստակ չափանիշ, այլև վարույթն իրականացնող մարմնի կամահայտնությանն է թողնված անձի՝ պաշտպան ունենալու կամ չունենալու հիմնարար իրավունք⁴:

Այսպիսով, տեսական վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել «իրավունքի չարաշահում» հասկացության մի քանի հատկանիշներ, որոնց միաժամանակյա առկայությունն անհրաժեշտ է, որ վարույթի մասնավոր մասնակիցների կողմից կատարված գործողությունները որակվեն որպես իրավունքի չարաշահում՝ առաջացնելով համապատասխան հետևանքներ.

1. նախ, որպեսզի տեղի ունենա իրավունքի չարաշահում պետք է առկա լինի համապատասխան սուբյեկտիվ իրավունքը, այսինքն՝ ոչ մի պարագայում չի կարող խոսք լինել իրավունքի չարաշահման մասին, եթե վարույթի տվյալ մասնակցին վերապահված չէ և, հետևաբար, վերջինս իրավասու չէ իրացնել չարաշահվող իրավունքը: Այս առումով նշենք, որ Նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի արգելքը պետք է տարածել ոչ միայն իրավունքների չարաշահման, այլև պարտականությունները կատարելուց չարամտորեն խուսափելու կամ դրանք պարբերաբար չկատարելու դեպքերի վրա, քանի որ պաշտպանի համար նիստին կամ իր համար պարտադիր վարույթային գործողությունների ներակայանալը ոչ թե իրավունք է, այլ պարտականություն:

⁴ Գործող քրեական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը նախատեսում է. «պաշտպան ունենալու կասկածյալի կամ մեղադրյալի արտահայտած ցանկությունը քրեական գործով վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցությունը կանխորոշող հանգամանք չէ, եթե նրանք ունեցել են նշանակված պաշտպան, սակայն հայտարարել են պաշտպանից հրաժարվելու մասին, որն ընդունել է քրեական վարույթն իրականացնող մարմինը»:

2. Բնականաբար, միայն իրավունքի առկայությունն ինքնին բավարար չէ իրավունքի չարաշահման համար, այն կարող է տեղի ունենալ իրավունքի իրացման ընթացքում: Ստացվում է, որ իրավունքի չարաշահումն ընթացակարգային երևույթ է:

3. Իրավունքի չարաշահումը հանգեցնում է իրավաչափ շահերի՝ թե՛ հանրային, թե՛ մասնավոր խախտմանը. ընդ որում՝ վնասը հասցվում է առերևույթ օրինական գործողությունների արդյունքում: Մա նշանակում է, որ այդ գործողությունները մշտապես դուրս են գալիս սուբյեկտիվ իրավունքի շրջանակներից, քանի որ դրա հիմքում ընկած օբյեկտիվ շահը չի նախատեսում այլ անձանց իրավունքների խախտում: Այսինքն՝ չի կարելի օրինական գործողությամբ հետապնդել ոչ իրավաչափ շահ:

4. Երևույթի կարևորագույն հատկանիշներից է չարաշահողի գիտակցումը, որ ինքն իր սուբյեկտիվ իրավունքը չարաշահում է, որի արդյունքում վնաս է պատճառվելու այլ մասնակիցների կամ արդարադատության շահին: Սրանում առանցքային նշանակություն ունի այն, որ սուբյեկտը ոչ միայն նախատեսում էր, այլ պետք է ն կարող էր կանխատեսել անցանկանալի հետևանքները և կանխարգելել դրանց վրա հասնելը:

5. Վերջին կարևորագույն հատկանիշն էլ այն է, որ գիտակցելով, որ վնաս է պատճառվելու այլ անձանց կամ արդարադատության շահին, դատավարության մասնակիցը, տվյալ դեպքում պաշտպանն, այնուամենայնիվ, չարաշահում է իր իրավունքը իր համար ցանկալի արդյունքին կամ նպատակին հասնելու համար: Այսինքն՝ չարաշահումը ոչ թե նպատակ է, այլ ցանկալի, սակայն արդարադատության, իսկ երբեմն նաև մեղադրյալի շահերի տեսանկյունից ոչ դրական նպատակին հասնելու միջոց կամ եղանակ:

Առանձնացված այս չափանիշները, չունենալով օրենսդրական ամրագրում, իրավակիրառողի համար պետք է հանդես գան որպես ուղեցույց, որոնցով առաջնորդվելու դեպքում վերջինս հնարավորություն կունենա ճիշտ գնահատել և հակագրել իրավունքի չարաշահման դեպքերին:

Анаит Арутюнян

Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

ЗАПРЕТ ЗЛОУПОТРЕБЛЕНИЯ ПРАВОМ В АДВОКАТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Проект нового Уголовно-процессуального кодекса РА среди принципов уголовного судопроизводства предусматривает феномен злоупотребления правом, нашедший отражение во второй части 29-ой статьи (запрет злоупотребления правом). В отечественном уголовном процессе предусмотрение этого принципа является абсолютной новизной. В этом принципе четко отражена воля обеспечить сбалансированную защиту общественных и частных интересов. Так же в нем впервые подчеркнута возможность ограничения процессуальных прав участников судопроизводства во благо правосудия.

Принимая во внимание особенности адвокатской деятельности и тот факт, что в нашей реальности злоупотребление правом адвокатами проявляются достаточно часто, анализ основных признаков и самого понятия злоупотребления правом на теоретическом уровне становится крайне важным.

Anahit Harutyunyan

PhD student of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics

THE PROHIBITION OF THE ABUSE OF DISCRETION IN THE ADVOCATE ACTIVITY

The principal aim of the Draft Code of Criminal Procedure of the RA is to define an effective procedure for conducting proceedings concerning alleged crimes, which is based on safeguarding human rights and freedoms. Regarding to this, the 2nd part of 29th Article of the Draft Code (Prohibition of the Abuse of Discretion) in criminal justice is too valuable and vital, especially when its stipulation in domestic criminal procedure is a novelty. The main value of this concept is that for the first time it clearly expresses the balance of the protection of public and private interests, as well as in its context is highlighted the possibility of restriction of the procedural rights for some individuals in the interest of justice.

Taking into consideration the features of advocate activity as well as the fact that in Armenian reality the abuse of discretion in the advocate activity appears quite often (which is certain not in respect with the ideology of advocate activity), thus the essential characteristics and the concept of abuse of rights itself need to be analyzed at least on the theoretical level.

Բանալի բառեր՝ իրավունքի չարաշահում, սկզբունք, քրեական պաշտպանություն, ոչ իրավաչափ, քրեական դատավարություն, հակասություն, դատավարական սանկցիաներ, փաստաբանական էթիկա, արդարադատություն, շահ:

Ключевые слова: злоупотребление правом, принцип, уголовная защита, неправомерный, уголовное судопроизводство, противоречие, процессуальные санкции, этика адвоката, правосудие, интерес.

Key words: abuse of rights, principle, criminal defense, illicit, criminal justice, contradiction, procedural sanctions, advocate ethics, justice, interest.